վկայում, դա պատահում էր տօներին, երբ ոգելից խմիչքը թուլացնում էր կապանքները, ու նա երգում էր: Նրա արցունքախառն, տխուր ու դողդոջուն երգերը կարծես նրա կորցրած մեռելների յիշատակի ոգեկոչումը լինէին: Քիւրդ գրող Մեհմեդ Ուզունը նոյն յիշողութիւնն է պահել Դիարբեքիրի վարպետ հնակարկատ Վարդանից, երբ մանուկ օրերին նրա ընտանիքի հետ Տիգրիսի ափերին զբօսանքի էին ելնում ու արիւնագոյն ծաղիկներով նռան ծառի տակ փռուած սփրոցին դրուած ռաքքին 22ի տակին էր հասնում:

Իսլամ կրօնն ու Սեհեր անունը ընդունած, Ֆեթհիէ Չեթինի մեծմայր՝ Հերանուշ (Հրանուշ) Կատարեանը 60 տարի իր ինքնութեան գաղտնիքը պահեց, ապրեց նոյն գիւղաքաղաքում՝ Մադենում, եւ ինչպէս Այշէ Գիւլ Ալթինայն է նշում, ամէն օր տեսաւ նոյն գետը, որ այնքան հայի դիակ էր խլել: Սեհերի զաւակներն էլ գիտէին, թէ իրենք մաքուր ցեղից չեն եւ գեաւուրի խառնուրդ ունեն: Դպրոցում եւ հասարակութեան մէջ նրանք խտրականութեան էին ենթարկւում, որովհետեւ իրենց մօր «գրանցման փաստաթղթում գրուած է եղել մուհթեդի (*mühtedi*)», այսինքն՝ մահմեդականութիւնը յետոյ ընդունած կրօնափոխ:

Ու Սեհերի զաւակները ամօթն ու վախը պահել էին եւ համակերպուել: Սեհերի թոռները արդէն ոչինչ չգիտէին: Սեհերը ինչպէ՞ս էր կարողացել իր բարի ու չարքաշ կնոջ երեւոյթի տակ այդքան տառապարքն ու յիշողութեան մէջ կուտակուած ու տակաւ չշիջող սարսափելի տեսարանների յաճախանքը թաքցնել: Ի՞նչը պատճառ դարձաւ, որ նա վերջապէս խօսէր, իր չմարող ցաւն ու կարօտը, իր սարսափելի յիշատակները իր թոռնուհուն՝ Ֆեթհիէին պահ տալ: Ո՛չ թուրք ազգայնամոլ մթնոլորտը եւ ոչ էլ Իսլամ